# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ

# ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ 11.11.2011թ.

Նախագահում էր մարզպետ Ն. Պողոսյանը, մասնակցում էր մարզի խորհրդի 92 անդամներից 81-ը:

Մասնակցում էին մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության տարածքային զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ Ս. Միքայելյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1.Մարզի համայնքների բյուջեների կատարման ընթացքի և անելիքների մասին:

/Զեկ. Յու. Մուշեղյան– ֆինանսական և սոցիալ –

տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ/

2.Մարզի 2012-2015թթ զարգացման ծրագրի մասին:

/Զեկ. Ա. Ղուկասյան – մարզպետի տեղակալ/

3.<<Հայաստան>> համահայկական հիմնադրամ>>-ի կողմից անցկացվող մարաթոնին մասնակցելու մասին:

/Զեկ. Ա. Ղուկասյան – մարզպետի տեղակալ/

4. Մարզի համայնքների առաջնահերթ խնդիրների մասին:

/Զեկ. Ի. Ասատրյան – ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ/

5. 2011 թ գյուղատնտեսական տարվա արդյունքների մասին:

/Զեկ. Վ. Հովհաննիսյան - գյուղատնտեսության և

բնապահպանության վարչության պետ/

6. Այլ հարցեր:

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ն. Պողոսյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) հնարավորինս ճշգրիտ կատարել անասնագլխաքանակի /մանր և խոշոր/ հաշվառումը.

2) ուշադրության կենտրոնում պահել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ